

## ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

1. ԷԼՐԻՆԵԱՆ ԱԶԳԻՇՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ. հրատ.  
Հազարեան ճեմարանի. հատ. I. ՓՇՐԱՆՔ ՇԻՐԱԿԻ  
ԱՄԲԱՐԵՐԻՑ. հաւաքեց Աղ. Միսիթարեանց. Մոս-  
կուա-Ալէքսանդրապոլ. 1901.

Հանդուցեալ գիտնական պրօֆ. Մկրտիչ Էմինի անունը  
յաւերժացնող «Էմինեան դրամագլխի» բարձրագոյնս հաստա-  
տուած կանոնադրութեան մի յօդուածը թոյլ է տալիս «Ճեռա-  
գիր ժողովածուների տաղագրութիւնը». ոյդ հիման վրայ՝ կանո-  
նադրութիւնն իրագործող մարմինը, Հազարեան ճեմարանի  
մասնադիտական դասընթացների ուսուցչական խորհուրդը հրա-  
տարակում է «Էմինեան ազգագրական ժողովածու ընդ-  
հանուր վերնագրով հայ ազգագրութեան վերաբերեալ թէ հում  
և թէ մշակուած նիւթեր»:

Աւելորդ ենք համարում բացատրել այս համակրելի ձեռ-  
նարկութեան նշանակութիւնը. ամեն մի փոքր է շատէ մտա-  
ւոր զարդացումն ունեցողին յայտնի է՝ թէ որքան մեծ կարե-  
ւորութիւն ունի ժողովրդական հայեացքների, վիլխովայու-  
թեան և սովորութիւնների ուսումնասիրութիւնն իւրաքանչիւր  
ազդի անցեալի և ներկայի հետազօտութեան համար։ Ազգա-  
գրութեան նիւթերը պարունակում են իրենց մէջ այն բոլոր  
տարրերը, որոնք կազմում են ազգերի կամ ժողովուրդների  
հոգեբանութիւնը։ Մարդուս հոգեբանութեան ուսումնասիրու-  
թիւնը գեռ կատարեալ չէ, երբ միայն անհատի հոգեկան ե-  
րևոյթներն ենք պարզում որովհետև անհատը հասարակութեան  
մասը կազմելով՝ յաճախ ենթարկւում է նրա ազդեցութեանը.  
այս երևոյթն էր պատճառը, որ տասնուիններորդ դարի երկ-  
րորդ կիսում կազմակերպուեց մի նոր գիտութիւն և կոչուեց  
ժողովուրդների կամ «ազգերի հոգեբանութիւն» — Völker-

psychologie: — Ութսունական թուականներին Բեռլինում հիմնուեց նոյն իսկ մի հոյակապ հաստատութիւն՝ «ազգերի հոգեբանութեան թանգարան» անունով, որտեղ կան բազմաթիւ քաղաքակիրթ և վայրենի ժողովուրդների ազգագրութեան վերաբերեալ բազմատարագ նիւթերի ճոխ հաւաքածուներ:

Ինչ վերաբերում է մասնաւորապէս հայ ազգագրութեան նիւթերին, պէտք է ցաւոք սրտի ասել, որ դեռ ևս շատ չնշին նիւթ է հաւաքուած և առաւել ևս չնշին մասը՝ համակարգուած:

Այդ ժողովածուների հիման վրայ դեռ ևս կարելի չէ ոռոշ եղանակացութիւններ անել, ուստի ամեն կերպ պէտք է աշխատել այդ ուղղութեամբ, նաև մանաւանդ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այսօր մեր ժողովրդի կեցութիւնն ու կենցաղն արագ փոփոխման է ենթարկում. օտար բարգերն ու սովորութիւնները հեշտութեամբ մուտք են գործում մեր ընտանիքները և հնադարեանն ու սեպականը նսեմացնում, անյայտացնում, նթէ չշտապենք՝ այն, ինչ որ դեռ այսօր հետազօտողը կարող է իւր աշջով տեսնել և ականջով լսել, վաղն արդէն միջնորդաբար պէտք է ուրիշց լսէ ու արձանագրէ՝ թերի և շատ անգամ էլ սխալ կերպով:

Ահա այս դիտադութիւններն ի նկատի ունենալով մենք սիրով ողջունում ենք ՀՀմինեան Ազգագրական ժողովածուի ձեռնարկութիւնը, որով շատերը կարող են խրախուսուել և հայ ազգագրական նիւթեր հաւաքել:

ՀՀմինեան Ազգագրական ժողովածուա-ի առաջին հատորը կազմում է պ. Ա. Մ. Միհիթարեանցի „Փշրանք Շիրակի Ամբարներից“ հաւաքածուն, որ Ալեքսանդրապօլի հայ ժողովը դական նիւթեր է պարունակում. 338 ութածալ էներից բաղկացած այս ժրաշան աշխատութիւնն երեք մասից է բաղկացած:

Առաջին մասը պարփակում է ժողովրդական բանաւոր գրականութեան տեսակները. ա. հեքիաթներ, բ. առակներ, գ. առածներ, դ. ասացուածներ, ե. հանելուկներ և շուտասելուկներ:

Երկրորդ մասի նիւթերն են. ա. հաւաք, բ. ընտանեկան բարք ու սովորոյթ, գ. կենցաղ և զբաղմունք:

Երրորդ մասը կամ յաւելուածն է Ալեքսանդրապօլի կամ Շիրակի գաւառաբարբառի համառօտ բառարանը:

Գրքի սկզբում գտնուող „խմբագրութեան կողմից“ ոռուերէն և հայերէն լեզուով ծանօթութեան մէջ ասուած

է, որ հեքիաթներից չորսն ուղարկուած են հանգուցեալ Ափ-  
րիկեանից:

Այսպիսի ժողովածուների հրատարակութիւնը հարկաւ  
գիտական նպատակների պէտք է ծառայէ, ուրեմն և որոշ հա-  
մակարդութիւն պէտք է ունենայ և կամ խմբագրական ծանօ-  
թութիւններով ճոխացրած լինի: Տարաբաղդաբար վերջին կե-  
տի նկատմամբ այս հրատարակութիւնը թերի է, չնայելով որ  
մի պատկառելի հիմնարկութեան անունով է լոյս տեսել: Աղ-  
գագրական նիւթերը հնացող բաներ չեն. դրանք կարող են գի-  
տութեանը ծառայել թէ այսօր և թէ յիսուն, հարիւր կամ ա-  
ռելի տարիներից յետոյ. դրանցից կարող են օգտուել թէ հայ  
և թէ օտար հայագէտ գիտնականները, ուստի և այս պէտք է  
ի նկատի ունենային հրատարակիչները և բացատրէին այն, ինչ  
որ անհասկանալի կարող է լինել. կան ոչ-գրական բառերով  
կազմուած առածներ, որ հասկանալի չեն, բայց ոչ ծանօթու-  
թիւն ունին և ոչ էլ գրքին կցուած բառարանում կան. օրինակ  
„Աղամ պուպուզ է տեսել“, „Ծառ պահ բլի, որ ձոր լցուի“,  
„Ծարանը եարա կը բանայ“, „Ծղրզ եմ, Ծան չեն խաղցներ“  
և այլն:

Կան բազմաթիւ թուրքերէն բառեր, նոյն իսկ առածներ,  
բայց ծանօթութեամբ բացատրուած չեն:

Առակներից շատերի վերջը կցուած են հաւաքողի կամ  
խմբագրողի (յայտնի չէ) եղրակացութիւնները կամ բարոյախօ-  
սութիւնները, որ աւելորդ են:

Աւելի լաւ կինէր, եթէ առակները բարբառով լինէին  
գլուած: Կան այնպիսի առածներ, որոնց միտքը չի կարող հաս-  
կանալի լինել ամենքի համար, բայց բացատրուած չեն.—օրի-  
նակ. «Արաբի արուն խօմ չէ». «Էծը կտաւին դուրս». «Ժա-  
տուրը խաղի կարօտ չէ». «Թագաւոր, մամալէդ բարով վայելես»  
—օրհնանք—և այլն:

Թէի խմբագրական ծանօթութեան մէջ յիշուած է, որ  
քազմաթիւ նիւթերից, «Ընտրութիւն» է եղած, սակայն ան-  
համ և նշանակութիւն չունեցող բաներ բաւականին մնացել  
են դարձեալ—օրինակ. «Աղուաւի ծեռուը աբասու տեղ կվերց-  
նես», «Աղջատին ծեծում էին, վայ կռնակս էր գոռում», «Ա-  
մեն մարդի հաւատալ չի լինի», «Աղջիկը մենծնայ, մենծ փառքի  
տիրանայ», «Անկեղու անբերան հայվան է», «Ամեն տեղ լուս  
ընկնելը լաւ չէ», «Աստծու լուսը հասնի», «Աստուած արու և

Եդ արար, վարդապետներին ով արար», «Քրիստոս Մահմատէն գոն է» և այլն։ Սրանք մեծ մասամբ հասարակ դատողութիւններ են և ոչ թէ առածներ։

Իրբւ փաղաքշանքներ առաջ են բերուած նաև այսպիսի նախադասութիւններ, «Դրոյդը թողի ինծ տանի, մենակ դու ողջ կաց», «Ծնծ թաղիր, յետոյ ինչ ուզում ես արա»։ Ժմ՛լրաը խաւարի, թարլի քեզ զաւալ չփայց, «Հոգիս Աստուած քու առաջն առնի», «Ձնջուի քեզ իսօու աչքով մտիք անողը» և այլն։ Այսպիսի օրինակները կարող են «փաղաքշանք» բառի խմասութ բոլորովին աղաւաղել։

Սպառնալիքների բաժնում առաջ են բերուած. «բրդողին էնպէս կուտացնեն, որ աչքը բան տեսնի», «էն ում շունն է, որ խօսքը չուանի դնեմ», „ընչանք էսօր կուլ չեմ դնացել, ըստուց ետը Աստուած դիտէ”, „փոշմանողն ու խօսքից յետ կայնողը նամարդ է” և այլն։ Այսպիսի նախադասութիւնները շնու երկշու մարդկանց համար միայն սպառնալիք կարող են համարուել։

Աւելի յաջող է կազմուած երկրորդ մասը, որ պարունակում է հետաքրքրական տեղեկութիւններ, մեր ժողովրդական հաւատապիքների, ընտանեկան սովորութիւնների, նախապաշարումների մասին և այլն։

Փողովոյն այնպիսի ձևով է հաղորդում այդ տեղեկութիւններից շատերը, որ հետաքրքրութեամբ և առանց ձանձրոյթի են կարդացուու— „Նանէի պատմածներից”, „Արոյի պատմածներից”, «Նանէի բժշկարանից» և այլն հաստուածները վէպի ալէս են կարդացուում— Բառարանը պէտք է թերի համարել, քանի որ նոյն իսկ դրքի մէջ գործածուած բառերից շատերը չկան նրա մէջ։

Գնահատելով պ. Աղ. Մխիթարեանցի մեղուաջան ու բարեխիղճ աշխատութիւնը, ցանկալի ենք համարում, որ „Հմիննեան ազգագրական ժողովածուից” յարգելի հրատարակիչներն այսուհետեւ այդպիսի աշխատութիւններ լոյս ընծայելիս՝ մանրամասն բացատրութիւններով ճոխացնէին, որպէս զի ազգագրական նիւթերն աւելի դիւրութեամբ ծառայէին գիտնական նպատակներին։